ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

2024 թվականի մարտի 4-ից 7-ը

Ռուսաստանի Դաշնություն (ք. Մոսկվա) գործուղման արդյունքների մասին

1" Անունը, ազգանունը, զբաղեցրած պաշտոնը՝

Օհաննա Գառգալոյան - Միջազգային համագործակցության վարչության մաքսային համագործակցության բաժնի պետ

Էմին Գալյան - Մաքսային հսկողության վարչության մաքսային գործառնությունների կազմակերպման և հսկողության բաժնի գլխավոր մաքսային տեսուչ

2" Գործուղման վայրը և ժամկետները՝

Ռուսաստանի Դաշնություն, ք. Մոսկվա, մարտի 4-ից 7-ը

3" Հրավիրող կողմը՝

Անկախ պետությունների համագործակցության մասնակից պետությունների մաքսային ծառայությունների ղեկավարների խորհուրդ

4" Գործուղման նպատակը (աշխատանքային ո՞ր խնդրի լուծման համար էր նախատեսված գործուղումը)՝

ԱՊՀ մասնակից պետությունների մաքսային ծառայությունների ղեկավարների խորհրդի (այսուհետ՝ Ղեկավարների խորհուրդ) 78-րդ նիստի նախապատրաստական աշխատանքների հետ կապված փորձագետների հանդիպում:

5" Քննարկված թեմաները՝

Ղեկավարների խորհրդի փորձագետների հանդիպման ընթացքում քննարկվել և համաձայնեցվել են որոշումների նախագծերը ավելի քան 13 հարցի շուրջ, այդ թվում

նաև՝ մաքսային մարմինների կողմից տրանսպորտային և առևտրային փաստաթղթերը կնիքելու և դրոշմակնիքելու կարգի, ԱՊՀ անդամ պետությունների մաքսային ծառայությունների և երկաթուղային փոխադրողների փոխգործակցության, մաքսային ծառայությունների համար կադրերի պատրաստման և վերապատրաստման, փոխադրումների հետագծելիության նպատակով տեղորոշման կապարակնիքների կիրառման փորձի, հետբացթաղումային հսկողություն իրականացնելիս Անկախ պետությունների համագործակցության մասնակից պետությունների մաքսային ծառայությունների փոխգործակցության մասին 2012թ. սեպտեմբերի 5-ի արձանագրության գործողության դադարեցման մասին և այլն:

6"Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը՝

Հանդիպման ժամանակ քննարկվել են երկաթուղային տրանսպորտով տեղափոխվող ապրանքների մաքսային հսկողության և մաքսային գործողությունների իրականացման ժամանակ ԱՊՀ անդամ պետությունների մաքսային մարմինների և երկաթուղային փոխադրողների փոխգործակցության մասին հարցերը, Անկախ պետությունների համագործակցության մասնակից պետությունների մաքսային ծառայությունների ղեկավարների խորհրդի նախագահի ընտրության, ինչպես նաև ԱՊՀ մասնակից պետությունների մաքսային ծառայությունների ղեկավարների խորհրդի 78-րդ նիստի անցկացման առնչությամբ հարցերը:

7" Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը՝

Հանդիպման վերջում ստորագրվել է ԱՊՀ մասնակից պետությունների մաքսային ծառայությունների ղեկավարների խորհրդի 78-րդ նիստի նախապատրաստական աշխատանքների հետ կապված փորձագետների հանդիպման արձանագրությունը:

8" Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները՝

Հանդիպումների ժամանակ ձեռք են բերվել պայմանավորվածություններ ԱՊՀ անդամ պետությունների միջև ավելի սերտ համագործակցության և մաքսային ոլորտում աշխատանքների ակտիվացման, ինչպես նաև 2024թ. ապրիլիո Ուզբեկստանի Հանրապետությունում Անկախ պետությունների համագործակցության մասնակից պետությունների մաքսային ծառայությունների ղեկավարների 78-րդ նիստի անցկացման վերաբերյալ:

9" Ստորագրությունը, ամսաթիվը

Օ. Գառգալոյան

Է. Գալյան

11.03.2024թ.